

ՍԵՐԵՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ

Անցյալ դարի 70-ական թվականներին ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտը ձեռնամուխ եղավ մի շատ կարևոր գործի հայկական համա-բարբառների կազմման աշխատանքներին: Թեև մեզանում նախկինում էլ հրատարակվել են նմանատիպ բառարաններ, սակայն այդ գործընթացը լայն թափ առավ վերջին 35 տարիների ընթացքում:

Լեզվաբանության ինստիտուտում բացվեց համաբարբառի բաժին, որի աշխատակիցներն սկսեցին կազմել 5-րդ դարի մատենագիրների երկերի համաբարբառները: Առաջինը, որ լույս տեսավ 1972 թ., եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի համաբարբառն էր: Սրան հաջորդեցին Ազաթանգեղոսի, Բուզանդի, Եղիշեի, Փարպեցու, Խորենացու, Դավիթ Անհաղթի, Ջենոնի, Ղևոնդի, Նարեկացու, Ասողիկի, Անանունի համաբարբառները: Ըստ հավաստի աղբյուրների մի շարք պատմիչների երկերի համաբարբառներն այսօր կազմված են և գտնվում են հրատարակման փուլում:

Տակավին վերջերս լույս տեսավ 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի «Պատմութիւն Սեբեոսի» աշխատության համաբարբառը, որի քարտարանը մշակել, բնագրային համաբարբառը կազմել և հրատարակության է պատրաստել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանը:

Մինչև համաբարբառը կազմելը Գ.Խաչատրյանը բ.գ.թ. Վանո Եղիազարյանի համահեղինակությամբ նորից է հրատարակել Սեբեոսի «Պատմության» բնագիրը՝ զուգահեռ արևելահայերեն թագմանությամբ (ի դեպ առաջին անգամ): Թարգմանության հեղինակները կատարել են արժեքավոր ծանոթագրություններ ու գրել առաջաբանը:

Համաբարբառը կազմվել է հենց այս վերջին հրատարակության բնագրի հիման վրա, մի իրողություն, որի շնորհիվ յուրաքանչյուր բանասեր, ով զբաղվում է Սեբեոսի լեզվի ու ոճի հարցերով մասնավորապես և զրաբարի հարցերով՝ ընդհանրապես, անձամբ կզգա, թե որքան ոյուրին է դարձել իր գործը, քանզի իր ձեռքի տակ ունի արդեն ճշտված և երկու գիտնականների ստեղծագործական ցենզուրայով անցած բազում կնճռոտ հարցերի պատասխաններ:

Ի դեպ, համաբարբառի հրատարակման համար հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում հովանավորին՝ «Լոռու դպրոց» հիմնադրամին ու նրա

նախագահ մարզպետ Յենրիկ Քոչինյանին, և գիրքը նվիրում հայ գրերի ստեղծման պանծալի հորելյանին 1600-ամյակին:

Կազմել որևէ ստեղծագործության համաբարբառ նշանակում է ներկայացնել տվյալ երկի ողջ բառացանկը այբբենական կարգով ու հեղինակային վկայություններով, յուրաքանչյուր բառ իր գործածության բոլոր ոլորտներով ու սկզբնաղբյուրի նշումով: Առերևույթ թվում է, թե դա աշխատատար, բայց հեշտ գործ է, սակայն դա այդպես է միայն առաջին հայացքից: Ըստ էության, նման աշխատանք նախաձեռնողը պետք է ունենա առաջին հերթին գրաբարի փայլուն իմացություն, որպեսզի կարողանա տարբերակել նախ և առաջ բառը, բառույթը, բառածևը, բառերի խոսքիմասային պատկանելությունն ու դրանց խոսքիմասային փոխանցումները համապատասխան ոլորտում, լավ տիրապետի գրաբարի բառակապակցությանը (հատկապես վերլուծական բարդություններին), լավ իմանա գրաբարի հոլովման ու խոնարհման համակարգերը (դրանց հետագա շեղումներով հանդերձ), որպեսզի ճիշտ կողմնորոշվի բառային ու քերականական համանունների լաբիրինթոսում և ուղղորդի համաբարբառից օգտվող բանասերին:

Այս տեսանկյունից Սեբեոսի «Պատմության» համաբարբառի հեղինակի կատարած աշխատանքը կբավարարի ամենախստապահանք գիտնականի պահանջները:

Նախկինում նմանատիպ բառարան կազմվել է մի ողջ աշխատակազմի կողմից՝ հեղինակավոր գիտնականների (Ղարիբյան, Աբրահամյան և ուրիշներ) ղեկավարությամբ, այժմ այդ աշխատանքը Գ.Խաչատրյանը կատարել է միայնակ: Նախորդ համաբարբառները հրատարակվել են բազմացման մեքենայով (ռոտոպրինտ), այժմ շարվածքը համակարգչային է, իսկ հրատարակված տարբերակը՝ անհամեմատ կատարյալ:

Համաբարբառն ունի մի շարք արժեքավոր կողմեր: Նախ՝ այն նոր լույս է սփռում գրաբարի բայի կազմության ու հարադիր բայերի ըմբռնման վրա: Համաբարբառում առանձնացվել են հարադիր բայեր, որոնց մոտավորապես 180-ը իբրև այդպիսիք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» և «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» բառարաններում չկան: Ամենևին նպատակ չունենալով հեռավորապես սովոր գցելու անգուզական բառարանների անուրանալի արժեքի վրա նշենք միայն, որ վերը նշված բառարանների հեղինակները նման նպատակ չեն հետապնդել, բայց քանի որ բառարանը հարուստ է հարադիր բայերով, փորձեցինք նրանով ծշտել, թե որ մասն է համապատասխանում Սեբեոսի համաբարբառի հարադիր բարդությունների հետ: Արդեն հրատարակված համաբարբառներում դրանց մի մասը արդեն դիտվել են

հարադիր բարոյություններ, սակայն տեխնիկական պատճառներով համաբար-բառների մի մասի հետ հնարավոր չէր համեմատել, քանի որ կան դեռևս չտպագրված, բայց արդեն պատրաստի համաբարբառներ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ այդ 180 հարադրությունների մի մասը հեղինակային է և առաքին անգամ այս համաբարբառում է առանձնացվել, ինչպես *անմիաբան լեալ*, *անքակ առնեն*, *դարան գործեալ*, *լի լինիմ*, *կարող լինիմ*, *համբաւ հանեն*, *հետիոտս անկանիմ*, *մազապուր պրծեալ*, *մարդ լինել*, *մարմին լինիմ*, *մարտ տամ*, *յաքսորս արկանեն*, *յորդեգիրս առնեն*, *պայման դնեն*, *պատերազմ տամ* և այլն:

Համաբարբառում առանձնացված են 100-ից ավելի համանուններ: Դրանք բազմազան են, և կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

Բառային համանուններ: Կան և լրիվ, և մասնակի համանուններ: Լրիվ (համահունչ և համագիր) համանունային շարքեր են կազմում ինչպես նույն, այնպես էլ տարբեր խոսքի մասեր, այդ թվում՝

1. ա) գոլական - գուական, ինչպես՝

ակն (քար) – *ակն* (աչք), *Անգեղ* (անձնանուն) – *Անգեղ* (տեղանուն), *Կարին* (անձնանուն) – *Կարին* (տեղանուն), *կիր* (կրելիք) – *կիր* (զաք), *կոյս* (կողմ) – *կոյս* (աղջիկ), *հրեշտակ* – *հրեշտակ* (բանազնաց), *ճակատ* – *ճակատ* (ռազմ.), *ծամբար* (վարակ) – *ծամբար* (բանակ), *ճեպետիս* (անձնանուն) – *ճեպետիս* (ճենաստան, տեղանուն), *մարդ* – *մարդ* (կին),

բ) գուական - ածական, ինչպես՝

ամուր (ամրոց) – *ամուր* (ած), *բուռն* (կռուփ) – *բուռն* (կատաղի), *մուխ* (ծուխ) – *մուխ* (կարծր), *վառ* (քող) – *վառ* (ծանր) (տես Ժանոթ. 113),

գ) գուական - մակբայ, ինչպես՝

առաք (գորաբանակի թև) – *առաք* (մկբ.),

դ) գուական - նախդիր, ինչպես՝

առ (ավար) – *առ* (նախդիր),

2. ա) ածական - մակբայ - նախադրություն, ինչպես՝

առաքի (նախկին) – *առաքի* (առջև) – *առաքի* (նախադրություն).

բ) ածական - նախդիր, ինչպես՝

մերծ (մոտ) – *մերծ* (նախդիր),

գ) ածական - վերաբերական, ինչպես՝

միայն (միակ) – *միայն* (վերաբերական),

3. թվական - բառ-մասնիկ - դերանուն, ինչպես՝

մի (ամ մի) – *մի* (միտական մասնիկ՝ *մի մեռցիմ*) – *մի* (դաշտավայրի միոց).

4. ա) դերանուն-դերանուն, ինչպես՝

ինչ (անորոշ դեր. ինչ ժամանակ) – *ինչ* (հարաբ. դու երթեալ, որ ինչ գտանին)

իւր (անձն. գորղի իւր) – *իւր* (ստացական պարանոցի իւրոյ),

բ) ոեռանուն – մակեալ – շաղկապ. ինչպես՝

այլ (ուրիշ) – *այլ* (այլևս) – *այլ* (շաղկապ),

գ) ոեռանուն – շառկապ. ինչպես՝

գի (դերանուն) – *գի* (շաղկապ) (սրանց միջև տարբերություն կա և արտահայտության, և արտասանության պլաններում: Բանն այն է, որ *գի* դերանունը առանց հարցական նշանի հանդես չի գալիս իբրև դերանուն, և արտասանությունն էլ հարցական հնչերանգով է ի տարբերություն *գի* շաղկապի),

5. ա) մաեբալ – շաղկապ – նախոհո. ինչպես՝

իբրեւ (իբրեւ նեխեցաւ) – *իբրեւ* (եւ եկաց իբրեւ ի վերայ...) – *իբրեւ* (իբրեւ գորղի և սիրելի),

բ) մակեալ – նախադրություն. ինչպես՝

արտաքոյ (դուրս) – *արտաքոյ* (արտաքոյ այգւոյն),

դէմ յանդիման (դէմ յանդիման տեսանելով) – *դէմ յանդիման* (դէմ յանդիման նորայ), *ընդդէմ* (հասանէր ընդդէմ) – *ընդդէմ* (ընդդէմ նորայ),

ի միջի (ասեն թշնամութիւն ի միջի) – *ի միջի* (ի միջի մերում),

ի ներքս (դիմեալ ի ներքս) – *ի ներքս* (ի ներքս քաղաքին),

ի ներքոյ (եցոյց գիւուն ի ներքոյ) – *ի ներքոյ* (ի ներքոյ պարսպին),

յանդիման (եկաց յանդիման) – (դէմ) *յանդիման* ((դէմ) յանդիման նորայ),

յետոյ (յետոյ եղեն կոապաշտ) – *յետոյ* (յետոյ ամենեցուն),

6. բալ – շառկապ. ինչպես՝

կամ (կամ ի դուռն) – *կամ* (կամ մեռանի):

Չևաբանական համանունություն են կազմում նաև ծևով նույն, սակայն տարբեր սեռի բայերը՝ *առնում* (ն.)՝ և ոչ *առնում* ի ծենք սակ *գեռամ* մի - *առնում* (կր.)՝ առաւ և Զրատն («վերցվեց նաև Զրատը»), *բառնամ* (ն.)՝ եբարծ գերկիրդ - *բառնամ* (կր.)՝ բարծաւ թագաւորութիւնն, *թողում* (ն.)՝ թողում զամենայն երկիրն - *թողում* (կր.)՝ թողցի արդ ի բաց խորհուրդն այն, *ի բաց թողում* (ն.)՝ թողու ի բաց զամենայն - *ի բաց թողում* (կր.)՝ թողցի արդ ի բաց խորհուրդն այն, *լնում* (ն.)՝ Լնու զնա ոսկւով - *լնում* (կր.)՝ Եւ լցան ամենեքեան, *տամ* (ն.)՝ Ես քեզ տամ զնա - *տամ* (կր.)՝ և սիրտ մարդոյ տուաւ նմա և այլն:

Զամաբարբառի հեղինակը բժախնդրորեն առանձնացրել է նաև մասնակի համանունները, դրանց մի մասը գրությամբ տարբեր, սակայն համահունչ բառեր են, և որոնք տարբերվում են միմյանցից նրանով, որ մեկը հատուկ անուն

է (տեղանուն, անձնանուն), մյուսը՝ հասարակ անուն (բնականաբար, առաջիններն անվանողական արժեք չունեն, երկրորդները՝ ունեն), ինչպես

Արեգակն - արեգակն, Արեւելք - արեւելք, Արեւմուտք - արեւմուտք, Կլան (տեղանուն) - ական, Աքսոր (տեղանուն) - քսոր, Գեղ (տեղանուն) - ցեղ (գեղեցկություն), Դու (տեղանուն) - դու, Իշխան (հատկանուն) - իշխան, Դայ - հայ, Դայր (աստված) - հայր, Դարաւ - հարաւ, Դարաւային - հարաւային, Դեր (տեղանուն) - հեր (մագ). Դոռոմ - հոռոմ, Զոր (տեղանուն) - ծոր, Սարգ (տեղանուն) - մարգ (Հոռոմաց մարգ), Որդի (Աստծու Որդի) - որդի, Պահլաւ - պահլաւ, Պարսիկ - պարսիկ, Սինկղիտոս (անձնանուն) - սինկղիտոս (ծերակույտ), Սուր (տեղանուն) - սուր, Վահան (անձնանուն) - վահան (ասպար), Տաճիկ (հատկանուն) - տաճիկ (արագոտն) և այլն:

Համաբարբառում մեծ թիվ են կազմում նաև հնչյունափոխված տարբերակով մասնակի համանունները. օրինակ՝ *Այրարադ - Այրարատ, Դգլադ - Դգլաթ, Երակլես - Երակլոս, Երակղէս - Երակղոս, (Զավիտեան) Խոսրով - Զաւիտեան Խոսրով, Կարնացի - Կարնեցի, Կիւղիկեցի - Կիւղիկէացի, Դերակլ - Դերակղ, Նախճաւան - Նախճըւան, տանուտերութիւն - տանուտերութիւն:*

Կարծում ենք՝ հատկապես այս կարգի զուգահեռ ձևերը հետագա շրջանի բնագրային աղավաղումներ են. այնուհանդերձ Գ.Խաչատրյանը աշխատել է հավատարիմ մնալ իր ձեռքի տակ եղած բնագրին:

Համաբարբառում առանձին բառահոդվածներով են ներկայացվել նաև այնպիսի զուգահեռ ձևեր, որոնցից մեկում կա հնչյունի հավելում (մենք դրանք ևս դիտում ենք մասնակի համանուններ): Սկս դրանք՝ *Թումա - Թումաս, ի վերջոյ - ի վերջոյ, Լիկիանէ - Լիկիանոս, Խոսրով Շընում - Խոսրով Շում, կայան - կայեան, Կոստանդ - Կոստանդէ - Կոստանդէս, Կոստանդին - Կոստանդիոս, Դերակլ - Դերակղ - Դերակղոս, Դոմ - Դոմվմ, ոսկեզաւծ - ոսկեզօծ, պալատ - պալատն, Ռաշնայն - Ռաշնան, Տրդատէս - Տրդատիոս, Փառոխ - Փառոխտ, Փիլիպիկոս - Փիլիպպիկոս:*

Կան նաև նույն բառի տարբեր գրությամբ տարբերակներ *յայնմ հետ - յայնմհետ, նա եւ - նաեւ և այլն:*

Կան բառարանային միավորներ էլ, որոնք նույն բառահոդվածից առանձնացվել են տվյալ բառի հետ գործածված այլ բառի հարադրությամբ. հեղինակը վերջիններս դիտել է անտարրալուծելի լեզվական միավորներ՝ *նոյն - նոյն ժամին, փոքր - փոքր մի - փոքր մի ի շատ:*

Համաբարբառից օգտվողները հեշտությամբ կարող են կողմնորոշվել 7-րդ դարի գրաբարի բայի սեռի տարբեր դրսևորումների արդեն ճշտված տարբերակներից:

Հեղինակը ճիշտ է կողմնորոշվել նաև անձնական և ցուցական դերանունների թեք հոլովածների և ստացական դերանունների համանուն չարքերում:

Համաբարբառի մյուս արժանիքն էլ այն է, որ բժախնդրորեն առանձնացված է նախդիրների ու նախադրությունների հետ գործածված բառերի հոլովառության ողջ հարացույցը՝ համապատասխան ընդգծումներով:

Ի դեպ, նախորդ համաբարբառների վերջում տրված են հատուկ անունների ու տառերի ցանկերը: Գ.Խաչատրյանը սրանց հավելել է նաև աշխատության բնագրային համաբարբառի ողջ բառացանկը, մի բան, որի շնորհիվ առանց երկար փնտրտուքների մի քանի էջի սահմաններում միանգամից հաղորդակցվում ենք Սեբեոսի երկի բառազանձի ողջ ծավալին: Ըստ հեղինակի հաշվումների բառերի ընդհանուր քանակը 35559 է, բառարանային բառերի ընդհանուր քանակը՝ 4467, մեկ անգամ գործածված բառերի քանակը՝ 2086:

Մեզ մնում է ողջունել «Հայկական համաբարբառ, 17, Սեբեոս» - ի ծնունդը և երախտագիտություն հայտնել բոլոր այն անհատներին, ովքեր նմանօրինակ աշխատություններով հեշտացնում են հայոց լեզվի հարցերով զբաղվող բանասերների գործը, ինչպես նաև այն անհատներին, ովքեր հովանավորում են գրքի տպագրությունը: